

**ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Հաստատում եմ՝
**Բանասիրության
և միջմշակութային
հաղորդակցության
Ինստիտուտի տնօրեն**
Ն.Ի. Տատկալո
« 08 » 07 2024 թ.

**Ինստիտուտ՝ Բանասիրության և միջմշակութային հաղորդակցության
Ամբիոն՝ Լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության**

Հեղինակ՝ Սարինյան Մանե

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հանրալեզվաբանություն

**Բակալավրի\մագիստրոս կրթական ծրագիր՝ Բակալավրի
Դասիչ մասնագիտություն՝ 023 201.02.6 «Լեզվաբանություն»
(Միջմշակութային հաղորդակցություն /անգլերեն լեզու/
3 կուրս**

Դասընթացի անտեսացիան

Մշակույթ ու հանրալեզվաբանություն դասընթացը նախատեսված է միջմշակութային հաղորդակցության ոլորտի ապագա մասնագետների համար, որոնց հիմնական խնդիրներից մեկը «Լեզու և հասարակություն» հարցն է: Մշակույթն ու հանրալեզվաբանությունը փոխկապակցված հետազոտական ոլորտներ են, որոնք ուսումնասիրում են լեզվի և հասարակության փոխազդեցությունը: Մշակույթը ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, ներառյալ լեզուն, նորմերը, արժեքները, համոզմունքները, արվեստը, ավանդույթներն ու սովորույթները: Այն կարևոր դեր է խաղում ինքնության ձևավորման մեջ և ազդում է մարդկանց վարքագծի և ընկալման վրա: Հանրալեզվաբանությունը ուսումնասիրում է լեզվի և հասարակության միջև փոխկապակցվածությունը՝ դիտարկելով, թե ինչպես են սոցիալական գործոնները (ինչպիսիք են դասը, սեռը, տարիքը, էթնիկ պատկանելությունը) ազդում լեզվի վրա, և ինչպես է լեզուն իր հերթին ազդում սոցիալական գործընթացների վրա:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Մշակույթ և հանրալեզվաբանություն» դասընթացի նպատակն է՝

1. Ստեղծել գիտելիքների համակարգ մշակույթի և հանրալեզվաբանության ոլորտում;
2. Ուսումնասիրել լեզվի գործառնությունը տարբեր մշակութային և սոցիալական խմբերում;
3. Բացահայտել լեզվական փոփոխությունների մեխանիզմները սոցիալական և մշակութային համատեքստում;
4. Համադրել մեթոդաբանությունը և պրակտիկան մշակութային և հանրալեզվաբանական հետազոտություններում;
5. Ջարգացնել վերլուծական հմտությունները հաղորդակցության ժամանակ հաղորդակցության մասնակիցների միջև:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

1. Սահմանել հանրալեզվաբանության հիմնական հասկացությունները;

2. Ուսումնասիրել լեզվի և հասարակության կապը;
3. Բացահայտել լեզվի և մշակույթի փոխկապվածությունը և փոխազդեցությունը;
4. Ճանաչել լեզվի փոփոխությունները բոլոր մակարդակներում;
5. Հայտնաբերել անձի և մշակույթի կապը լեզվական փոփոխությունների հիման վրա;
6. Ուսումնասիրել հանրալեզվաբանական գործոնների կրթական, քաղաքական և սոցիալական նշանակությունը;
7. Չարգացնել ուսանողների մշակութային ընկալունակությունը;
8. Սովորեցնել ստեղծել անձի (խմբի) հանրալեզվաբանական դիմանկարը:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը լեզուն է՝ սոցիալական և մշակութային համատեքստում:

Դասընթացի առարկան ներառում է՝

- Լեզվի և հասարակության փոխազդեցությունը;
- Լեզվի և մշակույթի կապը;
- Լեզվական փոփոխությունների մեխանիզմները;
- Մշակույթի ազդեցությունը լեզվի վրա;
- Հանրալեզվաբանական գործոնների կրթական, քաղաքական և սոցիալական հետևանքները:

Դասընթացի մուտքային պահանջները

Ուսանողները պետք է իմանան այն լեզուն, որով անց է կացվում ուսուցումը, ինչպես նաև ընդհանուր պատկերացում ունենան լեզվական գործընթացների և երևույթների մասին: Սա թույլ կտա նրանց ավելի խորը հասկանալ լեզվի առանձնահատկությունները և նրա ազդեցությունը սոցիալ-մշակութային գործընթացների վրա:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները, Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

պետք է իմանա

- <<Մշակույթ և հանրալեզվաբանություն>> դասընթացի առարկան և օբյեկտը; հանրալեզվաբանության հիմնական հասկացությունները և ուսումնասիրության մեթոդները;
- հանրալեզվաբանական ուղղությունները; լեզվի սոցիալական տարբերակման վրա ազդող գործոնները;
- Ժամանակակից լեզվական իրողությունները;
- լեզվական քաղաքականության նպատակներն ու խնդիրները:

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

պետք է կարողանա

- վերլուծել լեզվական իրավիճակը ժողովրդագրական, սոցիոլոգիական և այլ տվյալների հիման վրա;
- օգտագործել հանրալեզվաբանության և հարակից գիտությունների տերմինաբանությունը;
- վերլուծել լեզվական քաղաքականության գործնական իրականացումը:

ընդհանրական իմացական հմտությունները՝

պետք է տիրապետի

- հանրալեզվաբանության ոլորտում հետազոտական և գործնական աշխատանքի հիմնական մեթոդներին և սկզբունքներին;
- պետք է ցուցաբերի ունակություն և պատրաստակամություն՝ իրականացնելու տեղային հետազոտություններ լեզվաբանական գիտության տվյալ ոլորտում փաստարկված եզրակացությունների և արդյունքների ձևակերպմամբ:

Մասնագիտանալով «Մշակույթ և հանրալեզվաբանություն» առարկայի մեջ՝ ուսանողները պետք է զարգացնեն մի շարք **կարողունակություններ**, ցուցաբերեն **ինքնուրույնություն** և ստանձնեն կոնկրետ **պարտականություններ**:

Կարողունակություններ (կոմպետենցիա)՝

Տեսական գիտելիքներ.

- Հանրալեզվաբանության հիմնական հասկացությունների և տեսությունների ըմբռնում և դրանց կիրառությունը մշակութային համատեքստում;
- Հանրալեզվաբանության պատմական զարգացման և ժամանակակից միտումների ծանոթություն:

Վերլուծական հմտություններ.

- Լեզվաբանական և լեզվական երևույթների վերլուծություն սոցիոմշակութային տեսանկյունից;
- Տարբեր սոցիալական համատեքստերում լեզվական իրողությունների ուսումնասիրություն հանրալեզվաբանական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտական հմտություններ.

- Փորձնական հետազոտություններ անցկացնելու կարողություն, ներառյալ տվյալների հավաքագրումը և վերլուծությունը;
- Որակական և քանակական հետազոտական մեթոդների կիրառման կարողություն:

Գործնական կիրառություն.

- Հանրալեզվաբանական տեսությունների կիրառումը իրական իրավիճակներում և խնդիրներում;
- Բազմամշակութային և բազմալեզվային միջավայրերում հանրալեզվաբանական խնդիրների լուծման ռազմավարությունների մշակում:

Ինքնուրույնություն`

Ինքնուղղորդված ուսուցում.

- Լրացուցիչ ռեսուրսների և գրականության ինքնուրույն մշակում գիտելիքների խորացման համար;
- Հիպոթեզներ առաջադրելու ունակություն:

Քննադատական մտածողություն.

- Արդեն գոյություն ունեցող գրականության և հետազոտական արդյունքների քննադատական վերլուծություն:

Խնդիրների լուծում.

- Ինքնուրույն առանձնացնել հանրալեզվաբանական խնդիրները և առաջադրել դրանց փաստարկված լուծումները;
- Ցուցաբերել ստեղծարարություն և նորարարություն հանրալեզվաբանական հասկացությունները նոր համատեքստում կիրառելու գործում:

Պարտականություններ`

Ակադեմիական ազնվություն.

- Հետազոտությունների և գիտական աշխատանքի ընթացքում ակադեմիական ազնվության և էթիկական վարքագծի պահպանում;
- Աղբյուրների ճիշտ հղում և ինտելեկտուալ սեփականության իրավունքների պահպանում:

Մասնագիտական զարգացում.

- Մասնակցություն մասնագիտական զարգացմանը նպաստող միջոցառումներին, որպիսիք են սեմինարները և կոնֆերանսները;
- Հանրալեզվաբանական գիտելիքների կիրառում` նպաստելու մշակութային երևույթների ըմբռնմանը և սոցիալական համախմբվածությանը:

Դասավանդման եղանակները և մեթոդները`

<<Մշակույթ և հանրալեզվաբանություն>> դասընթացի դասավանդման մեթոդիկական ներառում է հետևյալ հիմնական սկզբունքներն ու մոտեցումները.

- Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ. Ուսանողներին ակտիվ քննարկման և բանավեճի մեջ ներգրավելը օգնում է նրանց ավելի լավ հասկանալու և գործնականում կիրառելու դասընթացին ներհատուկ հասկացությունները:
- Նյութերի բազմազանություն. Տեքստերի, աուդիո և վիդեո նյութերի, ինչպես նաև իրական կյանքի օրինակների ներգրավումը օգնում է ուսանողներին ավելի լավ յուրացնել նյութը և կիրառել դրանք տարբեր համատեքստերում:
- Տեխնոլոգիաների ակտիվ օգտագործում. Ինտերակտիվ առցանց ռեսուրսների կիրառումը ուսանողներին թույլ է տալիս ձեռք բերել հանրալեզվաբանության ոլորտում գործնական հմտություններ և փորձ:

- Քննադատական մտածողության ձևավորում. Վերլուծական մտածողության, լեզվաբանական երևույթների և դրանց սոցիոմշակութային համատեքստի քննադատական վերլուծության, ինչպես նաև հանրալեզվաբանության ոլորտում տարբեր տեսակետների և գաղափարների գնահատման ունակության զարգացում:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «2» .. ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	34
1.1.1. Դասախոսություններ	18
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝ սեմինար	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	2
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	76
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգաթք)	ստուգաթք

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. The Social Study of Language: Language and Society; Culture and Language;	2	1	1

Language Variation			
Թեմա 2. The Ethnography of Speaking and the Structure of Conversation	2	1	1
Թեմա 3. Locating Variation in Speech: Speech Communities and Repertoires; Dialect	3	2	1
Թեմա 4. Styles, Specialized Varieties or Registers and Domains; Slang and Solidarity	3	2	1
Թեմա 5. Language and Gender; Social Stratification	4	2	2
Թեմա 6. Bilinguals and Bilingualism; Language Socialization; Code Switching and Code Mixing	4	2	2
Թեմա 7. Societal Multilingualism; Language Loyalty and Reversing Language Shifts	4	2	2
Թեմա 8. Language and Ethnic Identity; Language and Politics	4	2	2
Թեմա 9. Pidgins and Creoles; Diglossia	4	2	2
Թեմա 10. Applied Sociolinguistics: Language Policy and Language Planning; Status Planning; Corpus Planning	4	2	2
Մոդուլ	2		2
Ընդամենը	34	18	16

Թեմա 1. Լեզվի սոցիալական ուսումնասիրությունը; Լեզու և հասարակություն; Լեզու և մշակույթ; Լեզվական տարբերակներ:

Հանրալեզվաբանությունը ուսումնասիրում է լեզվի և հասարակության հարաբերությունները և հասարակության ազդեցությունը լեզվի վրա: Լեզվի սոցիոլոգիան ուսումնասիրում է լեզվի ազդեցությունը հասարակության վրա: Հանրալեզվաբանության օբյեկտը լեզվական տարբերակների քննությունն է՝ պայմանավորված սոցիալական համատեքստով, կրթությամբ և այլ գործոններով: Տվյալների հավաքագրման տարբեր մեթոդներ են մշակվել. գաղտնի ձայնագրություն, հարցազրույց, անմիջական պատասխանների արձանագրում, հարցաթերթիկներ և այլն:

Թեմա 2. Խոսքի էթնոգրաֆիա և գրույցի կառուցվածք; Քաղաքավարություն և քաղաքավարության բանաձևերը:

Հանրալեզվաբանական հետազոտությունը չի սահմանափակվում միայն լեզվական իրողությունների ուսումնասիրությամբ, այլև կարևորում է սոցիալական համատեքստը: Հիմնական ուշադրությունը նախադասությունից տեղափոխվում է դեպի հաղորդակցության ակտը, դեպի իրադարձությունը, որը բնորոշվում է յոթ տարբեր գործոնների առկայությամբ՝ խոսող-գրող, լսող-ընթերցող, հաղորդագրություն, հաղորդագրության թեմա, ֆիզիկական միջոցներ, վայր, խոսողի հուզական մոտեցումը, թեմայի դենոտատիվ կամ ռեֆերենտային գործառույթները: Այս մոդելը ներկայացնում է խոսքի էթնոգրաֆիան:

Թեմա 3. Խոսքի վարիացիայի սահմանումը. խոսքային համայնքներ և ռեպերտուարներ; Բարբառ:

Լեզվական համայնքը բոլոր այն մարդիկ են, ովքեր խոսում են տվյալ լեզվով և ունեն ընդհանրություններ հնչյունաբանության, քերականության մեջ և բառապաշարում: Հանրալեզվաբանները ուսումնասիրում են մարդկանց խմբերի լեզվական իրողությունների յուրօրինակ դրսևորումները: Խոսքային ռեպերտուարը հատկանշվում է ինչպես գործառական, այնպես էլ տարածական գործոններով: Լեզուն ունի իր յուրահատուկ վարիացիաները ոչ միայն մի սոցիալական խմբից մյուսն անցնելիս, այլև մի տարածաշրջանից մեկ այլ տարածաշրջան անցնելիս: Բարբառագիտությունը ուսումնասիրում է տարածաշրջանային տարբերություններով պայմանավորված լեզվական տարբերակները:

Թեմա 4. Ոճեր, մասնագիտացված տարբերակներ կամ ռեգիստրներ և տիրույթներ:

Բարբառը վերաբերում է տեղային կամ սոցիալական պատկանելությամբ պայմանավորված տարբերակներին: Ոճը վերաբերում է պաշտոնականության աստիճանի տարբերություններին: Ինչպես տարածաշրջանային բարբառը տարբերում է մի տարածաշրջանի բնակիչներին մեկ այլ տարածաշրջանի բնակիչներից, այդպես էլ սոցիալական բարբառը՝ սոցիոլեկտը, կապված է որոշակի սոցիալական դասի կամ խմբի հետ և առանձնացնում է այդ դասը կամ խումբը այլ դասերից կամ խմբերից: Երրորդ

տեսակը վերաբերում է մասնագիտացված տարբերակին կամ ռեգիստրին, որը հատկանշվում է մասնագիտական բառապաշարի ընդգծումով: Տիրույթները կազմված են երեք որոշիչ բաղադրիչներից՝ տեղ, դեր-հարաբերություններ և թեմա:

Թեմա 5. Լեզու և գենդեր; սոցիալական շերտավորում:

Հանրալեզվաբանները ուշադրություն են դարձնում նաև տղամարդկանց և կանանց լեզվական տարբերություններին: Այդ տարբերությունները հատկապես դրսևորվում են արտասանության, բառապաշարի, շարահյուսության և հնչերանգի մեջ: Ուիլյամ Լաբովը առաջադրել է սոցիալական շերտավորման գաղափարը՝ ուսումնասիրելով դասային տարբերությամբ պայմանավորված լեզվական տարբերակները:

Թեմա 6. Երկլեզվություն; Լեզվի սոցիալականացում; Կողերի փոխարկում և խառնուրդ:

Երկլեզու մարդն այն անձն է, որը տիրապետում է որոշ գործառույթային հմտությունների երկրորդ լեզվում: Տարբեր ոլորտների համար երկլեզու մարդն ունի նախընտրելի լեզու: Տուն-դպրոց կամ տուն-աշխատանք տիրույթներն ամենատարածվածն են: Լեզվի տարատեսակը դիտվում է որպես կոդ: Տարբեր ոլորտներում մարդիկ նախընտրում են այս կամ այն կոդը՝ երբեմն ընտրություն կատարելով երկու կամ ավելի լեզուների միջև: Անցումը մի կոդից մյուսը կարող է տեղի ունենալ նույնիսկ միևնույն նախադասության մեջ:

Թեմա 7. Սոցիալական բազմալեզվություն; Լեզվական հավատարմություն:

Պատմականորեն բազմալեզու համայնքներ առաջացել են միգրացիայի արդյունքում, որը հանգեցրել է շատ երկրների լեզվական կազմի փոփոխության: Լեզվի պահպանման և լեզվական փոփոխությունների խնդիրները դարձել են բազմալեզու հասարակություններով հետաքրքրվող հանրալեզվաբանների ուսումնասիրության առանցքը:

Թեմա 8. Լեզու և էթնիկ ինքնություն; Լեզու և քաղաքականություն:

Մարդը բնորոշվում է իր լեզվով: Բազմալեզու հասարակությունները առնչվում են լեզվի ընտրության խնդիրներին: Էթնիկ խմբերը համարում են, որ իրենց լեզուն լավագույն միջոցն է իրենց ավանդույթների պահպանման և փոխանցման համար: Լեզուն հաճախ օգտագործվում է որոշակի քաղաքական իշխանություն իրականացնելու համար:

Կառավարությունը կարող է վերահսկել ազգային փոքրամասնություններին՝ արգելելով նրանց լեզուն: Տարածաշրջանային կամ սոցիալական բարբառի օգտագործումը քաղաքական առաջնորդի կողմից հաճախ հանդիսանում է որոշակի էթնիկ ինքնության հաստատում:

Թեմա 9. Պիդգին և կրեոլ լեզուներ; Դիզլոսիա:

Pidgin - Պարզեցված լեզվի տեսակ, որը ոչ մի էթնիկ խմբի մայրենի լեզուն չէ և օգտագործվում է տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև հաղորդակցության նպատակով: Creole - Կրեոլը զարգանում է տարբեր լեզուների պարզեցումից և միախառնումից: Ինչպես ցանկացած լեզու, կրեոլները ունեն որոշակի քերականական համակարգ, կայուն բառապաշար, և երեխաները յուրացնում են այն որպես իրենց մայրենի լեզու: Այս երեք հատկանիշները առանձնացնում են կրեոլը պիդգինից: «Դիզլոսիա» տերմինը վերաբերում է նույն լեզվի երկու տարատեսակներին, որոնք օգտագործվում են տարբեր գործառույթների համար:

Թեմա 10. Կիրառական հանրալեզվաբանություն; Լեզվական քաղաքականություն և լեզվի պլանավորում:

Լեզվի պլանավորումը եզրույթ է՝ փոփոխելու լեզվի ձևը կամ կիրառությունը ցանկացած փորձի համար: Ըստ Վայնշտեյնի (1980, էջ 56), «Լեզվի պլանավորումը կառավարության կողմից լիազորված, երկարաժամկետ, կայուն և գիտակցված փորձ է՝ փոխելու լեզվի գործառույթը հասարակության մեջ հաղորդակցության խնդիրները լուծելու համար»: Երկու և ավելի լեզուների պարագայում որոշակի նորմեր և կանոններ սահմանելու ցանկացած փորձ կոչվում է կարգավիճակի պլանավորում: Սահմանված լեզվի կառուցվածքը փոփոխելու ցանկացած փորձ կոչվում է կորպուսի պլանավորում:

Դասընթացի ապահովումը գրականությամբ

Spolsky, B. (1998). Sociolinguistics. Oxford University Press. Spolsky, B. (2004). Language Policy. Cambridge: Cambridge University Press.

Adler, M. K. (1978). Naming and Addressing: A Sociolinguistic Study. Hamburg: Helmut Buske. Change in Standard Englishes in the Twentieth Century. London: Longman.

Cooper, R. L. (1989). *Language Planning and Social Change*. Cambridge: Cambridge University Press

Crystal, D. (2003). *English as a Global Language*. 2nd edn. Cambridge: Cambridge University Press.

Eckert, P. and Rickford, J.R. (eds.) (2001). *Style and Sociolinguistic Variation*. Cambridge: Cambridge University Press.

Labov, W. (2001). *Principles of Linguistic Change, II: Social Factors*. Oxford: Blackwell.

Marshall, J. (2004). *Language Change and Sociolinguistics: Rethinking Social Networks*. Basingstoke: Palgrave Macmillan.